Արձանագրություն N 2-2

ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/16 ծածկագրով «Երևանի Սիլվա Կապուտիկյանի անվան հ. 145 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի նորոգման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան 15.09.2025թ.
ժամը 12:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Եղիազարյան
Անդամներ՝ Ա. Աչոյան
Ա. Խաչատրյան
Ս. Իշխանյան
Հանձնաժողովի քարտուղարի պարտականությունները կատարող՝ Գ. Հակոբյան
Բացակայում էր հանձնաժողովի անդամներ՝ Ս. Գասպարյանը

1. Մասնակցի հայտի ուսումնասիրության մասին

(Ա. Եղիազարյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ Պաշտպանության նախարարությունից սահմանված ժամկետում գրություն չի ստացվել, ՀՀ պետական եկամուտների կոմիտեից և ՀՀ տարածքային զարգացման հիմնադրամից ստացված գրությունների համաձայն, գնման ընթացակարգի մասնակից «Ռեմ Տեխնիկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը համապատասխանում է ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/16 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 4 դեմ-0:

2. Գնման ընթացակարգի ընտրված մասնակցի վերաբերյալ

(Ա. Եղիազարյան)

2.1 Հիմք ընդունելով ընթացակարգի մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը և գնահատող հանձնաժողովի գնահատման թերթիկները՝ «Ռեմ Տեխնիկ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է բավարար:

2.2 ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակից ճանաչել «Ռեմ Տեխնիկ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:

3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշման վերաբերյալ

(Ա. Եղիազարյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2.2 կետով ընդունված որոշումը, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել ընտրված մասնակից «Ռեմ Տեխնիկ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:

4. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

(Ա. Եղիազարյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրը ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ -4, դեմ-0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Եղիազարյան

Անդամներ՝

---------- Ա. Աչոյան

---------- Ա. Խաչատրյան

---------- Ս. Իշխանյան

Արձանագրությունը կազմեց հանձնաժողովի քարտուղարի պարտականությունները կատարող՝ ---------- Գ. Հակոբյան